Արցախանգ

ARTZAKANK - ECHO

Bimestriel bilingue publié à Genève

JANVIER - FÉVRIER 2023
N° 243

RETROUVONS L'ESPRIT DU MOUVEMENT KARABAGH

(© archives.am)

Il y a 35 ans, le peuple arménien vivait une des pages les plus tragiques et horrifiantes de son histoire récente. Du 27 au 29 février 1988, dans la ville de Sumgaït, des meurtres, des tortures et d'autres atrocités ont été commis contre la population arménienne de la ville par des groupes de voyous bien armés, dans l'indifférence générale des forces de l'ordre locales et avec l'instruction des autorités azerbaïdjanaises. Le but de ces actions était de créer un climat de terreur et de réprimer les revendications pacifiques des Arméniens du Haut-Karabagh, suite à la décision historique du 20 février 1988 adoptée par l'assemblée législative de cette région autonome de l'Azerbaïdjan, demandant son rattachement à l'Arménie. Plus tard, le même scénario allait se reproduire à Bakou et dans d'autres villes d'Azerbaïdjan ainsi que dans le nord de l'Artsakh, suivi de la déportation du reste de la population arménienne. L'idéologie anti-arménienne, mise en œuvre par ces actes barbares, allait devenir, au cours des décennies suivantes, la politique d'État de l'Azerbaïdjan, pour aboutir à la guerre de 44 jours avec ses conséquences désastreuses que nous connaissons. Nous sommes arrivés à un stade où, encouragé par l'indifférence de la communauté internationale et bénéficiant de l'impunité totale, l'Azerbaïdjan ne cache pas ses intentions génocidaires envers les Arméniens.

Aujourd'hui, le risque de répétition des horreurs de Sumgaït plane sur les têtes des Arméniens d'Artsakh comme une épée de Damoclès. Malgré les nombreux appels des dirigeants du monde politique international et de diverses instances, le couloir de Berdzor reste toujours (au moment où nous mettons ce numéro sous presse) bloqué depuis mi-décembre 2022, par des pseudo-activistes écologistes azéris, provoquant une crise humanitaire insoutenable pour les 120'000 Arméniens pris en otage. Par ailleurs, l'ordonnance de la Cour Internationale de Justice (CIJ), la plus haute juridiction de l'ONU siégeant à La Haye, du 22 février 2023, demandant à l'Azerbaïdjan de "prendre toutes les mesures à sa disposition pour assurer la circulation sans ➤➤➤

Բովանդակութիւն

Էջ 2 - 35 տարի առաջ. հայերու կոտորածը Սումգայիթի մէջ
Էջ 5 - Հեռախօսազանգ մը Ստեփանակերտէն ...
Էջ 7 - Կենացներ բարձրացնելու հայկական մշակոյթի պատ-մութիւնը
Էջ 10 - Թալիշ գիւղի Սբ. Ամենա-փրկիչ եկեղեցին «աղուանա-ուդիական» հռչակելու մասին
Էջ 12 - Հայաստանում խաղա-դրոյքների գումարը հերթական ռեկորտն է սահմանել
Էջ 15 - Այվազովսկին հայ է. «Մետրոպոլիտէն»-ը փոխել է ծովանկարչի կտաւին կից առուած գրութիւնը
Էջ 18 - Շիրիմի այցելութիւն լեզուներու գերեզմանատան մէջ
Էջ 19 - Ծառի պաշտամունքը հայոց մէջ
Էջ 22 - Ժնեւ և Լեման շրջանի Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ լուրեր

Sommaire

P. 3 - Les médias et l'actualité arménienne
P. 4 - Commémoration du centenaire du Traité de Lausanne - Un ouvrage coécrit par Sten Thore et Ruzanna Tarverdyan récompensé
P. 8 - Soutien aux projet de KASA - Interview avec Véronique Girardet
P. 9 - "Khtan": Incubateur de l'entrepreneuriat social de KASA
p. 11 - Nous avons des ami(e)s
P. 13 - Réouverture du Musée d'Arménie de Jérusalem
P. 14 - L'inauguration de la Maison des Apprentis par Miassine
P. 16 - Des plaisirs simples
P. 17 - Alisa Voskanyan
P. 21 - Invitation aux professionnels arméniens de la diaspora
P. 23- Nouvelles de l'école Topalian
P. 24 - Nouvelles de l'UAS

Avec les compliments de
TAVITIAN
Atelier de sertissage
TAVITIAN S.A. - 18, ch. des Aulx - 1228 Plan-Les-Ouates - Téléphone 022 346 93 02 - Fax 022 346 93 04
tavitian@bluewin.ch

35 ՏԱՐԻ ԱՌԱՋ. ՀԱՅԵՐՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ՄԷՋ

Արցախը Հայաստանի միաւորելու նպատակով սկսած շարժումը ճնշելու համար Ազրպէյճանի իշխանութիւնները պետական մակարդակով երկրի հայ բնակչութեան նկատմամբ եղեռն եւ զանգուածային տեղահանութիւն կազմակերպեցին:

Սումկայիթի մէջ 26 փետրուար 1988-ին տեղի ունեցաւ Ազրպէյճանի Համայնավար կուսակցութեան քաղաքային կոմիտէի կազմակերպած հանրահաւաքը: Կոչեր արձակուեցան պատժելու հայերը, սպաննել զանոնք եւ վտարել Սումկայիթէն ու ամբողջ Ազրպէյճանէն:

Նոյն օրը Խորհրդային Միութեան ղեկավար Միխայիլ Գորբաչով Մոսկուայի մէջ հայ մտաւորականներու հետ հանդիպման ժամանակ մտավախութիւն յայտնեց Պաքուի հայերու անվտանգութեան նկատմամբ:

Կիրքերը հրահրելու համար ազրպէյճանական իշխանութիւնները ստայօդ լուրեր սկսան տարածել՝ իբրեւ թէ Հայաստանի մէջ ազրպէյճանցիներու զանգուածային սպանութիւններուն վերաբերեալ:

Սումկայիթի տեղական իշխանութիւնները քաղաքի հայերու բնակարաններու ցուցակներ կազմած, ջարդեր կազմակերպողներ հաւաքագրած եւ անոնց անվճար թմրեցուցիչ ու ոգելից ըմպելիներ տրամադրած էին: Հայերու բնակարաններէն հեռաձայնային կապերը անջատուած էին:

Փետրուար 27-ի երեկոյեան սկսան հայերու ջարդերը: Ազերիները սկսան աւերել ու կողոպտել հայերու բնակարանները եւ սպաննել տանտէրները: Քաղաքային, ներքին գործոց նախարարութեան եւ շտապ օգնութեան ծառայութիւնները քաշուած էին հրապարակէն:

Փետրուար 28-ին աւելի մեծ թիւով ջարդարարներ, զինուած դանակներով, սրածայր մետաղեայ ձողերով, կացիններով ու մուրճերով, եւ ձեռքերնին հայերու անուններու ցուցակներ, դուրս ելան փողոց: Քանի մը տասնեակ հոգիէ բաղկացած խումբերու բաժնուելով, անոնք կը ներխուժէին հայերու բնակարանները, կը խոշտանգէին, կը բռնաբարէին եւ կը սպաննէին:

Երեկոյեան բանակային ստորաբաժանումներ մտան Սումկայիթ, բայց անոնք ուժ եւ զէնք գործադրելու հրաման չունէին: Ամբոխը յարձակեցաւ զինուորներուն վրայ:

Հայերու դէմ բռնարարքները եւ սպանութիւնները շարունակուեցան, մինչեւ որ փետրուար 29-ի երեկոյեան բանակը վճռական գործողութիւններու դիմեց եւ կանխեց հետագայ ջարդերը:

Խորհրդային պաշտօնական տուեալներու համաձայն Սումկայիթի ջարդերու ընթացքին սպաննուեցաւ քսանվեց հայ, իսկ հարիւրաւորներ ալ վիրաւոր եւ հաշմանդամ դարձան, շատեր ալ անյայտ կորան: Հայերու հարիւրաւոր բնակարաններ աւերուեցան: Սակայն բազմաթիւ տուեալներ կ՚ապացուցեն, որ զոհերուն թիւը զգալիօրէն աւելի մեծ էր: ■

Ա. Մ.

(ԱԶԴԱԿ)

RETROUVER L'ESPRIT DU MOUVEMENT KARABAGH

➤➤➤ entrave des personnes, des véhicules et des marchandises le long du couloir de Latchin (Berdzor) dans les deux sens", reste pour le moment, lettre morte. Tant que cette ordonnance et les appels ne sont pas assortis de mesures concrètes, telles que des sanctions, pour obliger l'Azerbaïdjan à mettre fin au blocus, ce dernier poursuivra sa politique d'épuration ethnique contre les Arméniens d'Artsakh. Cela représente la première phase du programme panturquiste du président Aliev visant à ouvrir un corridor reliant l'Azerbaïdjan au Nakhijevan et à la Turquie sur le territoire souverain de l'Arménie, qu'il considère comme l'Azerbaïdjan occidental!

Cette année marque également le 35ème anniversaire de la naissance du Mouvement Karabagh, qui a incarné l'aspiration collective de notre peuple à restaurer la justice historique, et réaliser les droits du peuple d'Artsakh de vivre librement dans sa patrie. Il a été le symbole du renouveau de notre esprit national, de l'unité et de la consolidation de tous les Arméniens à travers le monde.

Le monde traverse une période de grands bouleversements où la sécurité et la souveraineté des États comme l'Arménie sont mises à rude épreuve. Il est difficile de suivre les développements géopolitiques fulgurants qui affectent l'Arménie et ses voisins, où se croisent les intérêts des puissances régionales, mais nous sommes tous conscients des risques existentiels qui guettent l'Arménie et l'Artsakh.

Serons-nous capables de surmonter ces défis et de prendre en main le destin de notre État, seul garant de la pérennité du peuple arménien? Serons-nous capables de dépasser tous les clivages internes et retrouver l'esprit rassembleur d'antan du Mouvement Karabagh? ■

M.S.

ԱՐՑԱԿԱՆԳ www.artzakank-echo.ch
Rue de la Terrassière 58 - 1207 GENEVE-SUISSE
Tél. +41(0)78 892 93 31 - artzakank@yahoo.com
Responsable de publication: Maral Simsar
Prix d'abonnement annuel: CHF 30.- (6 numéros)
CCP 12-17302-9 - IBAN CH-07 0900 0000 1201 7302 9

PREMAT S.A.
IMPORT & EXPORT
9, RUE DES ALPES
CH - 1201 GENEVE
TEL. 022 731 69 35

LES MÉDIAS ET L'ACTUALITÉ ARMÉNIENNE

Nous sommes souvent consternés par l'insuffisance, voire l'absence de couverture médiatique de l'actualité arménienne dans la presse et les médias audio-visuels grand public suisses. La situation alarmante des Arméniens et le risque d'épuration ethnique qui pèse sur l'Artsakh ne bénéficient pas de l'attention qu'ils méritent. D'autre part, l'Azerbaïdjan mène une offensive totale contre le peuple arménien sur tous les fronts, y compris médiatique, en y consacrant des moyens considérables. Ce constat suscite une profonde déception ainsi que des sentiments d'incompréhension, et d'impuissance chez les Arméniens. Alors que pouvons nous faire?

Artzakank a demandé conseil à un ami des Arméniens, actif dans le domaine des médias, que nous remercions vivement. Voici ces réponses:

Pourquoi les médias grand public suisses et les médias internationaux de manière générale ne s'intéressent pas à ce qui se passe dans le Caucase du Sud?

Avant toute chose, je pense qu'il faut se départir de l'idée qu'il existerait un «complot anti-arménien» chez les médias. La réalité, c'est que la place (journaux) ou le temps (radio, télévision) sont limités, ce qui implique des choix.

Afin de sélectionner les sujets retenus pour publication ou diffusion, il y a plusieurs critères (liste non exhaustive). Les médias s'appuient en grande partie sur le travail des agences de presse qui fournissent un fil de dépêches en continu. Elles-mêmes dépendent de leur réseau de correspondants et doivent également faire des choix. Et là, c'est une règle générale – applicable également aux médias – qui prédomine: l'ampleur et la proximité d'un événement déterminent s'il fera l'objet d'un article / d'un reportage ou non. La guerre en Ukraine en est un parfait exemple. On parle en revanche beaucoup moins des violences qui agitent l'est du Congo.

Mais il y a une autre réalité qui limite la possibilité de parler de l'Arménie dans les médias. Ces derniers sont sous pression financière depuis des années et les effectifs fondent. Les équipes, souvent très réduites, ne sont pas toujours en mesure de prendre le temps nécessaire pour évoquer des sujets qui demandent beaucoup de préparation. En outre, la rubrique internationale n'est pas toujours prioritaire au sein des médias qui privilégient l'actualité régionale et suisse.

Enfin, les Arméniens manquent souvent d'outils pour bien communiquer.

Justement, que peuvent faire les membres de la communauté arménienne pour attirer l'attention des médias?

Ne pas se décourager! Cela prend du temps d'attirer l'attention des médias sur les problématiques liées à l'Arménie et aux Arméniens. Il ne faut pas hésiter à prendre contact avec les rédactions, en expliquant pourquoi ces sujets sont importants. Et lorsqu'un article est publié ou un reportage diffusé, ne pas hésiter à remercier les médias concernés.

Prenons le cas de l'Artsakh: ce conflit ne concerne pas seulement Arméniens et Azerbaïdjanais, mais a des dimensions géopolitiques qui vont largement au-delà du Caucase. Pensons notamment à l'antagonisme Occident-Russie ou à la position de l'Iran. Ce sont des aspects qui méritent d'être abordés dans les médias en Suisse.

Autre conseil: lorsque c'est possible, souligner le lien avec la Suisse. Il y a des hommes et femmes politiques impliqués dans la cause arménienne, tout comme des organisations (Société pour les peuples menacés, entre autres). Il est important de le mentionner. Sans oublier la pétition adressée au groupe Migros pour qu'il cesse toute collaboration avec Socar.

Comment réagir à des publications anti-arméniennes ou contenant des erreurs?

Du point de vue du contenu, il faut argumenter de manière factuelle, en évitant tout discours de victimisation. Il est indispensable de ne pas se perdre dans les détails, d'aller à l'essentiel dès le début du texte. Ne pas hésiter à faire référence à des organisations internationales qui dénoncent des discriminations à l'égard des Arméniens (Amnesty International, Institut Lemkin, etc.). Certaines images peuvent être parlantes, comme celle d'une démocratie (l'Arménie) qui résiste courageusement face à des dictatures expansionnistes. La communication du gouvernement ukrainien peut être une bonne source d'inspiration.

Concernant le format, se renseigner au préalable auprès du média concerné sur la longueur maximale du texte. Cela tourne en général autour de 1400-1600 signes, espaces compris. Ce n'est pas beaucoup, d'où l'importance d'aller à l'essentiel. ■

COMMÉMORATION DU CENTENAIRE DU TRAITÉ DE LAUSANNE

"De 1923 à 2023 - Commémorations du centenaire du Traité de Paix signé entre les Puissances alliées et la Turquie à Lausanne le 24 juillet 1923" est le titre d'une série de manifestations qui seront organisées par la Ville de Lausanne du 24 avril au 8 octobre 2023 (https://www.lausanne.ch/portrait/carte-identite/histoire/traite-lausanne.html). Le programme des manifestations sera annoncé ultérieurement.

Ce Traité signé au Palais de Rumine à Lausanne entre les représentants du Royaume-Uni, de l'Italie, du Japon, de la Grèce, de la Roumanie et du royaume des Serbes, Croates et Slovènes d'une part, et la Turquie, représentée par son Premier ministre Ismet Inönü, d'autre part, a redessiné les frontières de la Turquie après la chute de l'Empire ottoman, en annulant les dispositions du Traité de Sèvres (10 août 1920) qui instituait une Arménie indépendante et un Kurdistan autonome.



Ce centenaire nous rappelle la polémique autour de la table sur laquelle le Traité avait été signé. En effet, le 11 novembre 2008, lors de son voyage en Turquie, M. Pascal Couchepin, alors président de la Confédération, avait fait cadeau, à son homologue Abdullah Gül, de cette table, en suscitant la colère des Arméniens et des Kurdes entre autres. Il s'agissait de la première visite officielle en Turquie d'un président de la Confédération et les relations entre les deux pays se sont notablement resserrées depuis cette date. M. Couchepin expliquera plus tard que cette table avait une grande valeur historique pour la Turquie, mais pas pour la Suisse.

Le 19 décembre 2008, Ueli Leuenberger, conseiller national, co-président du Groupe parlementaire Suisse-Arménie à l'époque, a déposé au Conseil national une interpellation cosignée par 23 parlementaires et intitulée "Cadeau empoisonné à la Turquie".

En soulignant le fait que *"le Traité de Lausanne a signé la mort de la création du Kurdistan et entériné la fin d'une Arménie indépendante, alors même qu'un génocide avait décimé plus de la moitié de sa population."*, les signataires demandaient au Conseil fédéral s'il était conscient du poids symbolique très lourd que pouvait représenter un tel cadeau pour les minorités qui ont été déchues de leurs droits et/ou massacrées.

Dans son avis du 13 mars 2009, le Conseil fédéral considérait que ce cadeau *"était à la hauteur de l'évènement"* et ajoutait: *"C'est grâce au Traité de Lausanne que la Turquie moderne et laïque a pu affirmer son existence aux yeux du monde occidental. Plus tard elle a rejoint le Conseil de l'Europe, l'année même de sa création en 1949, et quelque temps après, en 1952, elle est devenue membre de l'OTAN. On sait qu'elle est actuellement en pourparlers avec l'Union européenne en vue d'y adhérer. Elle s'efforce en outre d'entretenir des relations exemptes de tensions avec tous ses voisins. La Suisse, qui avait par exemple fourni à la jeune république turque le modèle de son Code civil, ne désire pas cacher sa relation à l'histoire turque, mais bien plutôt rappeler les faits. C'est cette même Turquie laïque et démocratique qui a vu le jour sur cette table qui s'engage aujourd'hui, aidée par des Etats amis, sur la voie du dialogue au sujet de son propre passé et sur celle du respect des ressortissants d'autres nations et des droits des minorités. Mais en Turquie, cette table rappelle que le Traité qui a été conclu à Lausanne a, à l'instar d'autres conventions internationales, causé une grande souffrance à d'innombrables habitants de la Turquie d'alors."*

Beaucoup d'eau a coulé sous les ponts depuis lors notamment dans ce pays qualifié de "laïque et démocratique" mais le Conseil fédéral a-t-il changé sa politique de promotion du dialogue entre les agresseurs et les victimes, en encourageant implicitement les premiers à poursuivre leurs crimes en toute impunité? ■

M.S.

UN OUVRAGE COÉCRIT PAR STEN THORE ET RUZANNA TARVERDYAN RECOMPENSÉ



Nous avons appris avec plaisir que le prestigieux prix *Professional and Scholarly Excellence (Prose Award) 2023* de AAP *(American Association of Publishers),* dans la catégorie *Single & Multivolume Reference and Textbooks in Social Sciences*, a été décerné au livre *"Measuring Sustainable Development Goals Performance" Elsevier 2022*, coécrit par Sten Thore et Ruzanna Tarverdyan.

Dans cet ouvrage, les auteurs élaborent un cadre de gouvernance "Consensus de Genève". Cette méthode, qui est un outil d'analyse multidimensionnel de performance, intègre les trois dimensions du développement durable: économique, sociale et environnementale. C'est cette approche que Ruzanna Tarverdyan souhaite faire valoir également par son engagement politique. ■

ՀԵՌԱԽՕՍԱՁԱՆԳ ՄԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԷՆ ...

Անուշ ԹՐՈՒԱՆՑ

Ստեփանակերտէն բարեկամուհիս է հեռաձայնողը: Լացակումած կը պատմէ իր ընտանիքի որոշումին մասին. «Երբ ճանապարհը բացուի, դուրս պիտի ելնենք Արցախէն, որոշած ենք»:

Իմ առաջին արձագանգս քիչ մը անհեթեթ էր. «Հապա տո՞ւնը»:

«Տունը պիտի ձգենք, կղպենք եւ ելլենք, այլեւս դիմանալու բան չէ այս ճնշումը»,- կ՚ըսէ վաղեմի բարեկամուհիս, որուն խօսած հայերէնը այնքան կը սիրեմ՝ համեմուած արցախեան բարբառով եւ գրեթէ զերծ ռուսական բառերէ, որ շատ առատ եւ յաճախ կը գործածեն արցախցիները: Ինծի համար անսովոր է լսել անոր լացակումած ձայնը. վաթսունն անց կին մըն է, զոր տեսած եմ միշտ լուրջ, ուժեղ եւ կեանքով լեցուն:

Ես անմիջապէս կը պատկերացնեմ անոր գեղեցիկ տունը, ուր հիւրընկալուած եմ տասը տարի առաջ: Մօտ տասը տարի առաջ Ստեփանակերտի մէջ աւարտին հասցուած էին առաջին նորակառոյց շէնքերը՝ ժամանակակից չափանիշներով, եւ մեր բարեկամները տուն գնած էին այդ շէնքերէն մէկուն մէջ: Երրորդ տունն էր, ուր անոնք փոխադրուած էին: Ամուսնացած էին, պզտիկ տան մը մէջ ապրած էին, զաւակները ծնած էին, փոխած էին, աւելի մեծ տուն մը գնած էին, իսկ երբ նորակառոյց շէնքերը ի յայտ եկան, իբրեւ զինուորականի ընտանիք, հնարաւորութիւն ստացան մաս-մաս եւ յարմար վճարումով մը ունենալ նոր, լուսաւոր եւ ընդարձակ բնակարան: Բնակարանը կահաւորած էին նորաոճ կահոյքով, ժամանակակից կենցաղային սարքերով, պատշգամէն կը բացուէր գեղեցիկ տեսարան դէպի Ստեփանակերտի մօտակայ անմշակ բարձունքները ... Ես, անոր որոշումը լսելով, անակնկալի եկայ եւ շուարումէս չգիտնալով ի՛նչ ըսել, անմիջապէս հարցուցի բնակարանին մասին, ուր հաճելի քանի մը օր անցուցած եմ նաեւ ես: Այսօրուան պէս կը յիշեմ՝ երբ ներս մտայ անոնց հիւրասենեակը, համարձակութիւն չունեցայ ոտքս դնելու գետնին փռուած արցախեան հնամենի եւ շատ լաւ պահպանուած խոշոր գորգին վրայ: Բարեկամուհիս զգալով իմ վարանումը, թեւէս ուղղակի քաշեց եւ կօշիկներով յայտնուեցայ շքեղ գորգին վրայ: Ան ըսաւ. «Կոխէ, քեզմէ լաւ մէ՞կը պիտի քալէ ասոր վրայէն»: Գորգը ժառանգութիւն ստացած էին ամուսինին ընտանիքէն, սերունդէ սերունդ պահպանուած էր այդ գանձը: Արժէքներ գնահատող այս ընտանիքը հիւրասենեակը պատած էր ճաշակաւոր իրերով, ձեռքի աշխատանքներով, գեղանկարներով եւ ժամանակակից, մեղմ կաթնագոյն կահաւորանքը արցախեան հարուստ գոյներով գորգին հետ այնքա՜ն ներդաշնակ էր... Անոնց շէնքին քովէն գետի մը վտակ կը հոսէր, եւ այդ խաղաղութիւնը, արցախեան կանաչիներով ճաշին բուրմունքը, հատապտուղներով թարմ հիւթին գոյնը անմոռանալի զգացողութիւն դրոշմած էր յիշողութեանս մէջ: Բայց բարեկամուհիս ընտանիքը բնակարանի եւ տարիներու ընթացքին ստեղծած յարմարաւէտութեան մասին չէր մտածեր: Բարեկամուհիս ըսաւ, որ խրճիթի մէջ ալ կը բնակի, միայն թէ գիտնայ, որ ապահով է եւ խաղաղ... Ըսաւ՝ մարդիկ կ՚երթան Երեւան գետինները կը նստին, բայց ազէրիին հետ չեն ապրիր...

Ես անմիջապէս պատկերացուցի, որ անոնք, շալկած իրենց իրերէն ամենակարեւորները, կը բռնեն գաղթի ճանապարհը, եւ սիրտս սեղմուեցաւ մռայլ այլ պատկերէն, որ գուցէ իրականութիւն ալ չդառնայ...

Շատ տխուր խօսակցութիւն էր, որուն միացաւ նաեւ բարեկամուհիս զինուորական ամուսինը, որ արդէն պաշտօնաթող զինուորական է: Վերջինս մտահոգ էր իր անցեալով: Արցախեան պայքարի առաջին տարիներուն ան մարտնչած էր իբրեւ ազատամարտիկ, իսկ յետոյ, երբ ստեղծուած էր Պաշտպանութեան բանակը (Արցախի զինեալ ուժերը), մտած էր բանակին մէջ եւ ծառայած: Ստացած էր շքանշաններ, զինուորական կոչումներ, պարգեւներ: Ամէն տարի տօնական օրերուն համազգեստին վրայ կը կախէր մանաւանդ շքանշանները եւ կը մասնակցէր Արցախի անկախութեան, Շուշիի ազատագրման օրուան եւ ուրիշ տօնակատարութիւններու: Իսկ հիմա մտատանջութեան մէջ է, կ՚ըսէ. «Վաղը ազէրիները կրնան ինծի այս փողոցներուն մէջ կեցնել եւ ըսել՝ դուն որո՞ւն դէմ կը կռուէիր, մեզի՞ դէմ, եկուր նայինք: Մեր բոլոր տուեալները իրենց քովն են, ամէն տեղեկութիւն ունին»: Ու շարունակութիւնը չի գիտեր, ի՛նչ պիտի ըլլար: Միտքը կասկածանքներու եւ տանջանքներու մէջ էր: Վաթսունն անց մարդը իր ամբողջ կեանքը, հաւատամքը, նուիրումը եւ ներդրումը իր հայրենիքի խաղաղութեան համար դրած էր եւ այսօր անիմաստ եւ քիչ մըն ալ վտանգաւոր կը նկատէ իր կենսագրութիւնը: Կը բացատրէ, որ քաղաքականութիւնը այսօր այնպէս մը դարձուցած են, որ Արցախի մէջ զինուորական գործը ոճրագործութիւն կը սեպուի, բռնութիւն՝ Ատրպէյճանի դէմ, ոչ թէ ինքնապաշտպանութիւն, պայքար կամ նուիրում: Ուստի կը ջանայ նոյնիսկ թաքցնել, որ զէնք վերցուցած է. բան մը, որով կը հպարտանային թէ՛ իրենք, թէ՛ պատերազմած բազմաթիւ մարդոց ընտանիքներ:

Բարեկամուհիս կը պատմէ, որ նոյն մտախռովութեան մէջ են նաեւ բազմաթիւ ընտանիքներ, բարեկամներ, որոնք այս օրերուն կը հաւաքուին իրարու տուներու մէջ եւ կը փորձեն ելքեր գտնել ստեղծուած իրավիճակէն: Բոլորը այն կարծիքին են, որ ուշ թէ կանուխ, ճանապարհը պիտի բանան, ➤➤➤

ՀԵՌԱԽՕՍԱՁԱՆԳ ՄԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԷՆ ...

➤➤➤ անկարելի է անվերջ գոցուած պահել ճանապարհ մը, այն ալ այդ մէկը ընեն քիչ թիւով մարդիկ, որոնք ոչ մէկ կառոյց կը ներկայացնեն, այլ կը կոչուին անկախ բնապահպաններ: Անոնք նոյնիսկ ձանձրացած են, եւ աւելի շատ ինքնաշարժներ կեցած են այդ ճամբուն վրայ, քան՝ մարդիկ:

«Ճանապարհը անպայման պիտի բանան, անկարելի է որ չբանան, բայց երբ բանան, շատեր դուրս պիտի ելլեն Արցախէն, ես այսպէս կը տեսնեմ»,- կ'ըսէ բարեկամուհիս: Ան կը յայտնէ, որ իր երիտասարդ զաւակները հեռանկար չեն տեսներ Արցախի մէջ: Դուստրը կ'աշխատէր ճամբորդական հարցերով գրասենեակի մը մէջ եւ երկու ամիս է՝ անգործ նստած է, իսկ որդին կ'ուսանի, սակայն համալսարանին մէջ խոժոռ միջավայր է, դասասենեակները ցուրտ են, արագ կը լքեն համալսարանը եւ ուղղակի տուն կ'երթան, երթալու ուրիշ տեղ ալ չկայ:

(Ապարաժ)

Ընտանիքը որոշած է կեանքը շարունակել Երեւանի մէջ, իսկ որդին գուցէ նաեւ մտածէ Ռուսաստան՝ ազգականներուն քով երթալու մասին: Սակայն Ռուսաստանի մէջ պատերազմական տրամադրութիւնը առայժմ երկմտանքի առջեւ դրած է անոր: Դժուար է տեղեկանալ այս մարդոց որոշումին մասին, որ տառապանքի գինով ձեռք բերուած որոշում մըն է: Ժամանակ առ ժամանակ Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը փակուելու վտանգը, կազի, ելեկտրականութեան ընդհատումները, սնունդի, կենցաղային իրերու, առողջապահական խնամքին պակասը, կրթութեան դժուարութիւնները եւ ամենակարեւորը՝ անորոշութիւնը մօտաւորապէս երկու ամիսէ ի վեր՝ կը խեղդեն Արցախի ժողովուրդը: Քիչեր կը հաւատան, որ ասիկա իրենց վերջին դժուարութիւնն է: Անոնք կ'ըսեն, թէ ասիկա տակաւին նոր եկող դժուարութիւններուն սկիզբն է, «քաղաքակիրթ», առանց յարձակումի ճնշում մը՝ փորձելու իրենց կամքը, համբերութիւնը, տոկունութիւնը եւ շօշափելու արցախցիներուն, աշխարհին եւ այս խաղին մէջ խաղացողներուն տրամադրութիւնները:

Արցախցին լաւ հասկցած է իր վիճակը: Այլեւս դիմանալու, տոկալու, համբերելու կոչերը, յորդորները անիմաստ կը թուին: Որքա՞ն կարելի է հեռաձայնել ամէն ինչէ կտրուած մարդուն եւ ըսել՝ դիմացէ՛ք, տոկացէ՛ք ... Հեռուէն շատ դիւրին է ըսել այս խօսքերը, անկարելի է նոյնիսկ սեփական մորթին վրայ զգալ այն, ինչ կը զգայ արցախցին:

Մեզմէ քանի՞ն ունակ է երկու ամիս ապրիլ առանց լիարժէք ելեկտրականութեան, պակաս սնունդով, առանց երթեւեկութեան վայել միջոցներու, պաղ տունին մէջ, երբ այդ հանգստաւէտութեան արդէն վարժուած է: Շատեր արցախցիներուն կը սատարեն եւ տոկալու ուժ կը մաղթեն եւ այդ մէկը կ'ընեն՝ նստած իրենց փափուկ բազմոցներուն վրայ, տեսակ-տեսակ պտուղները սեղանին դրած, իրենց սառնարաններուն մէջ առատ պանիր, հաւկիթ, միս, բանջարեղէն կայ, խոհանոցի կրակին վրայ՝ կաթսան լիքը ճաշ, հացամանին մէջ՝ կոկիկ մանրուած հացերու տեսակներ, տաքուկ անկողինը՝ միւս սենեակին մէջ բացուած, վառելիքով լիքը ինքնաշարժը՝ դուրսը կեցած...

Արցախցին ուտելիքի մասին այնքան չի մտածեր այս պահուն, որքան իր վաղուան օրը կ'ուզէ պատկերացնել: Երբեմն նոյնիսկ կը վիրաւորուին, երբ ուտելիքի մասին կը հարցնենք, կ'ըսեն՝ ատիկա խնդիր չէ, ուտելիք կը ճարուի, իրարու օգնելով բան կը կ'ուտենք, չենք մտածեր ինչ կերած ենք: Ուտելիքի զրկանքը այնքան չի նեղացներ, որքան վիրաւորանքը, լքուած ըլլալու զգացումը: Արցախցին համոզուած է, որ ինք արժանի չէ այս օրերուն: Դիմացած է վայրագ եւ սոսկալի պատերազմներու, ամիսներով ապրած է մութ, խոնաւ նկուղներու, ապաստարաններու մէջ, առանց կապի միջոցներու, հագուստներով քնացած է պաղ, հողոտ գետնին վրայ եւ ի վերջոյ իր լաւագոյն զաւակները տուած է՝ այն ժամանակ վստահ ըլլալով, որ լաւ օրերու համար են իր զրկանքները, տանջանքները, ցաւը...

Ամենադժնդակ թուացող այն տարիներուն՝ 1990-ականներուն, երբ պատերազմի դաշտէն միայն սարսափելի լուրեր կ'առնէինք, երբ Արցախի հիւանդանոցները լեցուն էին վիրաւորներով, նորէն լոյս, կազ չկար, արցախցին այսքան յուսահատ չէ եղած... Այն ժամանակ միջազգային կազմակերպութիւններ ալ կ'այցելէին Արցախ, կը փորձէին սատարել, հասկնալ արցախցիին ցաւը, օժանդակութիւն կը հասցնէին... Այժմ ոչ ոք կ'այցելէ Արցախ...

Բարեկամուհիս արցախցիի այսօրուան դրութիւնը նմանցուց փրփրուն գինիի՝ շամփայնի շիշին. «Երբ սեղմուած խցանը հանեն, պիտի պայթի, մարդիկ դուրս պիտի յորդին»:

Ի՞նչ խօսք, պատկերաւոր նկարագրութիւն է: Վառ պատկերացումներու պակաս չկայ: Արցախցին նոյնիսկ հատու հիւմորներ, կատակներ կ'ընէ իր վիճակին շուրջ, բայց այդ սրամտութիւններէն ոչ մէկը կը փրկէ այս վիճակը: Արդէն ոչ մէկ խօսք այսօր բուժիչ է: Ուշացած իրավիճակ մը կայ, եւ դժուար է հասկնալ, թէ ո՞ր կէտին վրայ եղած է ուշացումը, թերացումը, ո՞վ եղած է յանցաւորը այս վիճակին... Քաղաքագէտներ գուցէ բացատրեն ատիկա, բայց այդ ալ արցախցիին ապրածը ոչ մէկ ձեւով կը թեթեւցնէ: Արցախին մէջ բնակող 120 հազար հոգին այսօր գործնական քայլերու կարիք ունի: Ճշմարիտ եւ արդար խօսքի կը սպասէ արցախին եւ կ'ուզէ հաւատալ, որ այլեւս պիտի չխաբուի...

Ամէն անգամ որ մենք կը հաւաքենք 096 քոտով սկսող արցախեան ծանօթ թիւերը, եւ ամէն ➤➤➤

ԿԵՆԱՑՆԵՐ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ոչ մի հայկական խնջոյք չի անցնում առանց բաժակ բարձրացնելու եւ կենացներ ասելու: Հայերը այնքան լուրջ են վերաբերում կենացին, որ յաճախ դրա համար յատուկ թամադա են նշանակում: Սակայն Հայաստանում այս աւանդոյթի ծագման մասին քիչ բան է յայտնի: Միեւնոյն ժամանակ, վկայութիւնն այն մասին, որ հայ ժողովուրդը խնջոյքների ժամանակ կենացներ էր ասում, վերաբերում են մ.թ.ա.-ին:

«Անհնար է յստակ որոշել, թէ երբ են հայերը սկսել կենաց ասել: Այնուամենայնիւ, որոշ յուշումներ կան հնագիտական փաստաթղթերում: Արենիի քարանձաւային համալիրում աշխարհի հնագոյն գինեգործարանի յայտնաբերման շնորհիւ մենք գիտենք, որ Հայաստանի բնակիչները գինի են խմել դեռ մ.թ.ա. 4000 թւականին: Ուստի, միանգամայն հնարաւոր է, որ Հայաստանում առաջին կենացները սկսել են հնչեցնել հէնց այդ ժամանակ»,- նշւած է Armmuseum.ru-ի նիւթում, որի համար աղբիւր է հանդիսացել Smithsonianmag.com կայքը: Գրում է Panorama.am-ը:

Հայաստանում խնջոյքների եւ կենացների մասին առաջին գրաւոր յիշատակումը վերաբերում է մեր թւարկութեան 5-րդ դարին, երբ երկիրը գտնւում էր Պարսկաստանի տիրապետութեան տակ:

«Գահնամակ» կոչւող փաստաթղթերը պատկերացնում են տալիս, թէ ինչպէս են անցկացւել թագաւորական խնջոյքները Արշակունիների եւ Սասանեանների օրօք:

Խնջոյքներին հիմնականում տղամարդիկ էին մասնակցում, իսկ տօնական խնջոյքների ժամանակ կանայք առանձին էին նստում: Հաւանաբար հէնց այս պատճառով է, որ տղամարդիկ են գերիշխում հայկական կենացների մշակոյթում: Կին թամադաները հազւադէպ են նոյնիսկ այսօր:

«Կարելի է միայն կռահել, թէ արդեօք նման ծէսեր եղել են հասարակ մարդկանց շրջանում «Գահնամակի» գրման ժամանակաշրջանում, քանի որ նրա էջերում արտացոլւած է միայն հայ արիստոկրատների կեանքը: Սակայն ազգագրագէտ Լեւոն Աբրահամեանը կարծում է, որ հասարակ ժողովուրդը

ՀԵՌԱԽՕՍԱՉԱՆԳ ՄԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԷՆ ...

➤➤➤ անգամ, որ պատասխանը կ'ուշանայ, ես ոչ թէ կը մտահոգուիմ, այլ կ'ուրախանամ, քանի որ պատասխանելու պարագային ես այլեւս չեմ գիտեր ի՞նչ պիտի ըսեմ իմ բարեկամներուս: Ամէն անգամ կ'ուզեմ, որ ուշ պատասխանեն կամ այդ անգամը չպատասխանեն, մինչեւ ես որոշեմ, թէ ի՞նչ նոր խօսքեր պիտի մոգոնեմ՝ իբր թէ յոյս, ուժ պարգեւելու մարդոց, որոնք ատոր կարիքը այլեւս չունին...

Մէկ այլ ծանր տպաւորութիւն կը ձգէ համացանցային կապի միջոցով Ստեփանակերտ կապուիլը, երբ Ստեփանակերտ բառին փոխարէն «Google»ը կը գրէ «Խանքենտի»: Ասիկա Ստեփանակերտի ատրպէյճանական անուանումն է, որ արդէն արձանագրուած է միջազգային թուային ընկերութիւններու համակարգերուն վրայ...■

Ա.Թ.

(ժամանակ)

*De retour au **Salon du Livre**, le stand Arménie vous donne rendez-vous à **Palexpo Genève du 22 au 26 mars 2023, mercredi, jeudi de 9h:30 à 19h. vendredi, samedi de 9h:30 à 20h et dimanche de 9h:30 à 18h**. Des intervenants de qualité, un programme riche et varié vous sera présenté par le modérateur **Alain Navarra**. Au plaisir de vous accueillir nombreux sur notre stand.*

ձգտել է ընդօրինակել թագաւորական խնջոյքները: Այս տեսութիւնը հաստատւում է նաեւ 19-րդ դարի փաստաթղթերով, որտեղ հարսին եւ փեսային անւանում են թագաւոր եւ թագուհի:

Բայց Հայաստանում կենաց ասելու աւանդոյթը, ամենայն հաւանականութեամբ, առաջացել է դեռեւս առաջին յայտնի Գահնամակի յայտնւելուց առաջ: Երւանդունիների դինաստիայի ժամանակ գինի էին խմում արծաթէ ռիթոններից եւ հաւանաբար ունէր կենաց ասելու իր չփաստաթղթաւորուած աւանդոյթը: Սերնդէսերունդ փոխանցւող ժամանակակից կենացներում յաճախ են յիշատակւում արեւի լոյսն ու կրակը՝ զրադաշտականութեան առանցքային խորհրդանիշները, որին հետեւում էր հայերի մեծ մասը մինչեւ քրիստոնէութեան գալուստը:

Բացի գահնամակներից, հայ գրականութեան մէջ կենացներ բարձրացնելու մասին մինչեւ 19-րդ դարը գրեթէ չի խօսւում: Բայց դա չի նշանակում, որ այն ժամանակ աւանդոյթը չկար: Լոս Անջելէսի Կալիֆորնիայի համալսարանի հայագիտութեան պրոֆեսոր Փիթէր Քոուին ասել է. «Գրագիտութիւնը Կովկաս եկաւ քրիստոնէութեան միջոցով: Այն ամէնը, ինչը քրիստոնէական աստւածաբանութիւն չէր, բանաւոր էր: Այդ պատճառով էլ կենացների մասին յիշատակումը կորել է»: Հնարաւոր է նաեւ, որ կենացներն այնքան սովորական էին հայերի կեանքում, որ դրանց մասին ուղղակի չարժէր գրել»,- գրւած է նիւթում: ■

(Ալիք)

SOUTIEN AUX PROJETS ÉDUCATIFS DE KASA

INTERVIEW AVEC VÉRONIQUE GIRARDET

"Pour nous, c'est fantastique d'être en lien avec des gens éminemment positifs et motivés, qui peuvent déplacer les montagnes. Cela nous donne beaucoup d'énergie."

"E-Learning", "Jeunes citoyens" et "Entrepreneuriat social" sont des projets phare de la Fondation KASA, qui reflètent parfaitement sa vision de "privilégier une société de citoyens ouverts, autonomes, acteurs d'un changement signifiant dans un monde en rapide mutation".

Ces projets bénéficient du soutien de la fondation Covalence de la famille Girardet, basée à Genève. D'origine arménienne par son grand-père maternel, la présidente Véronique Girardet nous raconte l'histoire du partenariat de la fondation avec KASA.

Véronique et Blaise Girardet avec Zara Lavtchian, Azniv Aslikian et Tatevik Baghdassarian de l'équipe KASA

***Artzakank**: Quand et comment à été créée la fondation Covalence? Quels sont ses buts?*

Véronique Girardet: Issue de la vente d'une entreprise de la famille de mon père, spécialisée dans la fabrication de cadrans de montres, la fondation Covalence a été cofondée en 2010 par moi, mon époux Blaise et nos deux filles. Après réflexion, nous avons choisi de nous engager dans le domaine de l'éducation et de la formation, qui constituent des moteurs importants de développement et de changement.

Compte tenu de l'existence de nombreuses ONG spécialisées, nous avons décidé de ne pas créer une structure pour mener nos propres projets. Dès lors, il a fallu trouver des partenaires fiables selon les critères que nous avons élaborés avec l'aide d'une personne compétente. Petit à petit, des contacts ont été établis avec des organisations qui ont une référence en Suisse ou en Europe. Actuellement nous collaborons avec plusieurs partenaires, dont une organisation à Madagascar, une autre qui suit le développement d'une école au Cambodge, une troisième qui mène des projets à dimension écologique et KASA en Arménie.

***A.**: Comment avez-vous découvert KASA?*

V. G.:Nous avons commencé notre partenariat avec KASA en 2011. J'avais rencontré Monique Bondolfi dans le cadre de l'Atelier Œcuménique de Théologie (AOT) de Genève où elle donnait des cours. En 2003, mon mari et moi avons découvert l'Arménie lors d'un voyage avec KASA. Sur place, nous avons été impressionnés par les projets intéressants et les équipes de KASA, composées de jeunes femmes très curieuses, ouvertes et demandeuses de contacts. Nous avons resserré nos liens avec Monique et suite à un deuxième voyage en 2009 avons commencé à discuter des possibilités d'un partenariat avec KASA.

***A.**:Quels sont les projets de KASA que vous soutenez?*

V. G.: Nous avons commencé par le projet E-Learning qui était mis en avant par Anahit Minassian, directrice de KASA de l'époque. Elle nous expliquait que la formation à distance était absolument indispensable pour le développement des régions, pour permettre aux habitants des provinces d'avoir accès à l'éducation. Pour moi, c'était assez abstrait, mais j'ai accepté la proposition sur la base de la confiance que j'avais en Monique et Dario Bondolfi ainsi qu'en Anahit.

KASA a été pionnière pour promouvoir la formation à distance en Arménie, en participant d'abord à la traduction en arménien de Moodle, l'une des plateformes de formation en ligne les plus répandues.

Le premier module de E-Learning a été créé pour la formation des guides touristiques. C'était une période où le tourisme commençait à se développer en Arménie et il manquait de guides de qualité.

Très rapidement cet outil a été utilisé dans un autre projet autour de la citoyenneté, qui a démarré avec l'ambassade suisse et continue actuellement avec le partenariat de l'organisation *Brot für die Welt* (Pain pour le monde) des églises allemandes. Le but du programme Jeunes Citoyens* est d'encourager les jeunes à développer leur conscience civique et favoriser leur participation à la solution des problèmes de leurs communautés. C'est un projet signifiant et très porteur parce qu'il amène les jeunes à prendre conscience de leurs potentialités. À travers des cours en ligne, des jeux éducatifs et des manuels, ➤➤➤

(*) Dans le cadre de ce programme, au cours des 3 dernières années, 26 groupes de jeunes ont été créés dans différentes communautés, 72 jeunes ont été formés en tant que leaders et 2600 jeunes ont développé leurs connaissances dans le domaine de l'innovation sociale (source: www.kasa.am)

INTERVIEW AVEC VÉRONIQUE GIRARDET

➤➤➤ KASA assure la formation des participants à la conduite de projets, les aide à identifier les problèmes les plus urgents de leurs communautés et les accompagne par le biais de mentors pour assurer la réalisation efficace des objectifs du projet. Ainsi les jeunes deviennent des citoyens actifs, susceptibles d'apporter des changements positifs dans leurs communautés.

Il existe un autre projet qui a démarré il y a 2 ans. Il s'agit de l'entrepreneuriat social (voir ci-contre) qui me tient beaucoup à cœur. J'aimerais le promouvoir parce que je pense que dans la situation actuelle il est très important pour les Arméniens de pouvoir être des acteurs et de contribuer au développement de leurs communautés. J'ai vu des exemples fantastiques à dimension sociale. Je pense notamment à une psychologue qui, suite à une réflexion sur sa vie durant le Covid, a décidé de monter des ateliers de couture dans un village de la région de Shirak avec des femmes en situation de précarité. Le résultat a été si positif qu'elle souhaite maintenant agrandir son entreprise.

Monique Bondolfi, présidente de KASA et Véronique Girardet
(Crédit photo: kasa.am)

***A.**: Quel bilan tirez-vous de votre partenariat avec KASA?*

V. G.: Les choses évoluent rapidement en Arménie et KASA adapte ses projets en fonction des besoins. Les cours de formation à distance ont aussi beaucoup évolué. Après le Covid et la guerre, le nombre de personnes intéressées par la formation des guides touristiques a diminué. Mais la Fondation a commencé à développer un tourisme local notamment à Gumri et a continué de la sorte à former des guides. J'admire cette capacité à s'adapter et à rebondir.

Actuellement la formation à distance est devenue un outil incontournable dans tous les projets éducatifs de KASA. En 2021, une nouvelle plateforme a été lancée conjointement par KASA et la fondation Paradigma. Initiée avec 20 vidéos sur Facebook Live, la chaine *Imastuni* aborde des questions d'éducation, d'identité, d'inclusion, de nouvelles méthodologies, du rôle pédagogique de l'art et de la culture, de références philosophiques. Par le biais de cette chaine les éducateurs peuvent bénéficier d'un espace et d'un outil de réflexion professionnelle à travers des webinaires thématiques mensuels.

Le programme Jeunes Citoyens permet aux participants de développer leur sens d'initiative et leur esprit critique. L'automne passé nous avons eu l'occasion de rencontrer quelques-uns de ces jeunes qui nous ont impressionnés par l'attachement très fort qu'ils portent à leur pays.

Ce qui me plaît chez KASA c'est que les différents axes s'articulent bien les uns avec les autres. Ils ont gardé une dimension humanitaire à cause de la réalité des familles qui se trouvent dans la précarité. Pendant la guerre de 44 jours, tous les projets étaient suspendus pour se concentrer sur l'accueil et l'hébergement des réfugiés qui arrivaient de l'Artsakh.

***A**. Existe-t-il des similitudes entre les projets que vous soutenez en Arménie et dans d'autres pays?*

V. G.: C'est intéressant, il y a des thématiques qui se retrouvent. Les réalités sont très différentes d'un projet à l'autre mais elles nous permettent d'avoir une vision plus globale qui peut nous donner des idées et créer des synergies. Pour nous, c'est fantastique d'être en lien avec des gens éminemment positifs et motivés, qui peuvent déplacer les montagnes. Cela nous donne beaucoup d'énergie. ■

"KHTAN": INCUBATEUR D'ENTREPRENEURIAT SOCIAL DE KASA

Depuis le début de ses opérations, KASA s'est concentrée sur l'économie sociale et solidaire comme moyen de résoudre les problèmes économiques et développer les communautés en Arménie. Ces dernières années, l'économie arménienne a été durement touchée par la pandémie et la guerre de 44 jours. La pauvreté et la vulnérabilité dans les zones rurales ont considérablement augmenté ainsi que le chômage des jeunes. Réalisant la nécessité de s'impliquer dans le processus de reconstruction d'après-guerre, KASA a mobilisé ses ressources et celles de ses partenaires pour participer au redressement socio-économique rapide et viable du pays, en choisissant comme outil le développement et la diffusion de l'entrepreneuriat social. C'est ainsi qu'elle a démarré en 2021 un programme éducatif via un incubateur d'entrepreneuriat social baptisé "Khtan".

La première volée des bénéficiaires comprenait 50 personnes des régions de Lori, de Tavush et de Shirak ainsi que de l'Artsakh, sélectionnées sur la base de l'intérêt et de la motivation qu'elles portaient au développement de leurs communautés. Elles étaient toutes d'une manière ou d'une autre touchées par la guerre de 2020 (anciens combattants et leurs familles, enfants et épouses de soldats morts, etc.)

Les résultats de l'édition 2021-22 ont été probants: 60% des participants ont testé leurs produits sur le marché et environ 70% sont sortis du projet avec un plan d'affaires solides. Ils ont appris à faire des affaires et à aborder les questions sociales par le biais de solutions commerciales. Pour beaucoup de participants, le projet "Khtan" est devenu la force qui les a incités à rester dans leur pays, à redémarrer ➤➤➤

ԹԱԼԻՇ ԳԻՒՂԻ ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ «ԱՂՈՒԱՆԱ-ՈՒԴԻԱԿԱՆ» ՀՈՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թուականի յունուարի 15-ին ադրբեջանական CBC TV Azerbaijan հեռուստալիքով հեռարձակուեց բացայայտ քարոզչական բնոյթ կրող «Разрушенные храмы Карабаха: разоблачение армянского вандализма» ռուսալեզու վաւերագրական ֆիլմը: Ֆիլմի հեղինակը և վարողը Ադրբեջանում ռուսական համայնքի ղեկավարի տեղակալ, լրագրող Անաստասիա Լավրինան է: Ակնյայտ քարոզչական բնոյթ կրող ֆիլմում թիրախաւորուած էին Արցախի Հանրապետութեան Թալիշ գիւղի երկու կառոյցներ՝ գիւղի մշակոյթի տունը և սբ. Ամենափրկիչ եկեղեցին:

(© panorama.am)

Թալիշ գիւղի սբ. Ամենափրկիչ եկեղեցին ներկայացուում է որպէս աղուանա-ուդիական և վերագրուում 12-13-րդ դարերին: Նման կերպ է եկեղեցին ներկայացնում և թուագրում Ադրբեջանում ուդիական համայնքի ղեկավար Ռոբերտ Մոբիլին, ով ակտիւօրէն մասնակցում է հայկական մշակութային ժառանգութեան բռնաիւրացմանը միտուած ադրբեջանական պաշտօնական քաղաքականութեանը և քարոզչութեանը: Ռոբերտ Մոբիլիի համար նման թուագրութեան համար հիմք է հանդիսացել այն, որ ‹‹եկեղեցին կառուցուած է աւազաքարից, կրաքարից, որոնք հողմահարուում են 500-600 տարուայ ընթացքում››: Իսկ քանի որ, ըստ նրա, եկեղեցու որոշ քարեր մաշուած են, հողմահարուած, ուրեմն եկեղեցին շատ աւելի հին է: Նշենք, որ Թալիշի սբ. Ամենափրկիչ եկեղեցին կառուցուել է 1894 թուականին տեղի բնակիչների միջոցներով: Եկեղեցու մասին փաստացի տուեալներ է հաղորդում Մակար Բարխուդարեանցը (Բարխուտարեանց 1895, 226):

Ադրբեջանական կողմը, որը որոշ դէպքերում ինքն է մեջբերում և յղում Մակար Բարխուդարեանցին, ում աշխատանքներին շատ լաւ ծանօթ է, այս դէպքում, բնականաբար, լռում է: Թալիշի սբ. Ամենափրկիչ եկեղեցու աղուանա-ուդիական լինելու միւս կռուանը ըստ Մոբիլիի՝ եկեղեցու ներսի խաչերն են: Չգիտես ինչու, ադրբեջանական կողմը, Ռոբերտ Մոբիլին 17-19-րդ դարերի խաչային յօրինուածքները, խաչերը, խաչաքանդակները ներկայացնում են որպէս աղուանա-ուդիական:

Վաւերագրական ֆիլմում հնչում է այն միտքը, որ եկեղեցին չի ‹‹հայկականացուել››, գրեթէ անաղարտ՝ ‹‹աղուանա-ուդիական տեսքով›› է պահպանուել զուտ այն պատճառով, որ խորհրդային տարիներին շէնքը օգտագործուել է որպէս տնտեսական պահեստ և ներսի պատերը ծածկուել են սուաղի շերտով, ‹‹որի շնորհիւ էլ տեղում մնացել են ուդիական խաչերը››: Ռոբերտ Մոբիլին յայտնեց այն միտքը, որ շուտով եկեղեցին պէտք է վերանորոգուի, ամրակայուի որպէս տարածքում աղուանա-ուդիական յուշարձանի, եկեղեցու ցուցադրման լաւ օրինակ:

Ինչպէս տեսնում ենք, Ադրբեջանի քարոզիչներն ու իրենց «հետազօտողներ ու փորձագէտներ» հռչակողները, տարրական գիտելիքի պակասն ու անտեղեակութիւնը լրացնում են ինքնահնար յայտարարութիւններով՝ ըստ առաջադրանքի և պահի փոխելով հայ քրիստոնէական կառոյցների ժամանակն ու պատկանելութիւնը:

(monumentwatch.org)

"KHTAN": INCUBATEUR D'ENTREPRENEURIAT SOCIAL DE KASA

➤➤➤ à zéro, à apprendre un nouveau métier, à trouver des solutions originales. Les domaines concernés sont très variés: l'agriculture, l'éducation, les finances, le tourisme, le divertissement et les loisirs, l'aide socio-psychologique, la production alimentaire et la gastronomie, l'informatique, les arts et l'artisanat.

La deuxième édition, qui accueille 25 personnes, a débuté en février 2023 et se poursuivra jusqu'à la fin de l'été avec le programme suivant:
- 4 réunions présentielles (l'entrepreneuriat social en tant que modèle d'entreprise, le marketing et les ventes, la gestion financière, le soutien au développement du prototype d'entreprise)
- Modules d'apprentissage en ligne pendant toute la durée du programme
- Environ 10 exercices pratiques, qui amènent les participants à développer pas à pas les différents éléments de leur plan d'affaires en mettant en pratique ce qui a été appris
- Mentorat et coaching pour chaque participant afin de développer leurs idées et compétences commerciales individuelles
- Visite d'études aux entreprises sociales existantes
- Webinaires thématiques
- Développement et test de l'entreprise/du prototype du produit sur le marché
- Pitching (présentation de produits).

Les histoires des participants sont inspirantes et nourrissent l'espoir que malgré les horreurs de la guerre et le risque constant d'une nouvelle guerre, il est possible de trouver la force intérieure pour se relever, créer et valoriser sa communauté. ■

(Tiré du rapport de KASA 2022)

Ce projet recherche des compléments de financement pour les périodes 23 et 24.
Toute personne intéressée peut s'adresser à Monique Bondolfi, présidente de KASA Suisse
monique.bondolfi@kasa.am (tél : 021 728 50 78)
Banque UBS KASA-KOMITAS/CHF
IBAN CH67 0024 3243 FS12 052

NOUS AVONS DES AMI(E)S

Les Genevois(es) se rendront prochainement aux urnes pour renouveler les organes exécutif et législatif du Canton. L'élection du Grand Conseil et le premier tour de celle du Conseil d'État se tiendront le 4 avril 2023.

Depuis la guerre de 44 jours en 2020 et les évènements ultérieurs, qui continuent à hanter nos esprits, il nous semble, à juste titre, que notre entourage non-arménien n'est pas sensible au sort de notre peuple, ni aux risques existentiels qu'il encourt.

Cependant, rappelons que le 7 octobre 2020, alors que la guerre battait encore son plein, le Conseil municipal de la Ville de Genève a adopté la Résolution R-271 "Les Arméniens du Haut-Karabagh ont le droit à la vie et à l'autodétermination" (voir *Artzakank* N° 230 novembre-décembre 2020).

Rappelons également que le 14 octobre 2022, suite à l'offensive militaire de l'Azerbaïdjan contre le territoire souverain de l'Arménie, le Grand Conseil a adopté la Résolution R1005 "Pour la survie de l'Arménie" par laquelle il a demandé à l'Assemblée fédérale notamment de condamner l'Azerbaïdjan pour son agression contre l'Arménie et de reconnaître le droit à l'autodétermination des Arméniens du Haut Karabagh/Artsakh (voir *Artzakank* N° 241 septembre-octobre 2022).

Ces résolutions ont été votées par un grand nombre d'élus que nous pouvons considérer comme nos ami(e)s. Il n'est pas difficile d'imaginer les efforts qu'ils ont déployés dans le cadre de ces batailles législatives. *Artzakank* et probablement d'autres organisations et membres de la communauté arménienne de Genève, ont bien sûr adressé des lettres de remerciements aux chefs des groupes concernés. La prochaine élection du Grand Conseil est une bonne occasion pour exprimer notre gratitude envers les candidat(e)s qui ont initié ces résolutions ou voté en leur faveur.

Nous vous présentons la liste de ces candidat(e)s auxquels vous pouvez penser en remplissant vos bulletins de vote.

* * * * *

Liste 1: LES SOCIALISTES

MIZRAHI Cyril; MARTI Caroline; STRASSER Léna; OSMANI Xhevrie; ESTEBAN Diego; GAVILANES Amanda; THÉVOZ Sylvain; OJALVO DA SILVA Amanda; WENGER Thomas; BRÜCKER Oriana; HOLENWEG Pascal; CHIARADONNA Denis; CONTI Jennifer; MUSSA Ahmed (Youniss); JAMA Ahmed; LÜTHI Badia; BOSSHARD Pierre Yves; VALIQUER GRECUCCIO Nicole; RIELLE Jean Charles; DEONNA Emmanuel; BAILLON Glenna (BAILLON-LOPEZ QUINTEROS); VELASCO Alberto.

Liste 5: LE CENTRE

BACHMANN Delphine; BLONDIN Jacques; DESFAYES Sébastien; BIDAUX Patricia (BIDAUX-RODRIGUEZ); CHAKER MANGEAT Alia; GINCHARD Jean-Marc; LATHION Jean Charles; SAYEGH Souheil; AUBRY-CONNE Fabienne; CARRON Anne; DE KALBERMATTEN Alain; ZIMMERMANN Luc.

Liste 6: ENESMBLE À GAUCHE: SolidaritéS - DAL - Parti du Travail

NYFFELER BATOU Françoise; ZAUGG Christian.

Liste 7: MCG - Mouvement Citoyens Genevois

BÄRTSCHI François; ROCH Ana Belen; SORMANNI Daniel; CERUTTI Thierry; FLURY Chrisian; DIMIER Patrick; VALENTIN Francisco; MAGNIN Danièle; MADANI Amar; MÉNÉTREY Yasmine.

Liste 8: LES VERT-E-S

DE CHASTONAY Marjorie; TROTTET Louise; ECKERT Pierre; KHAMIS VANNINI Uzma; MACCHIAVELLI Marta (Julia); MARTIN David; DE MATTEIS Yves; MÜLLER SONTAG Corinne; ROIZ Jacqueline; DE ROUGEMONT Philippe; SORDET Adrienne; RUYSSCHAERT Denis; WISARD PRADO Leyma; WÜEST POUMEY Delphine; AMSELLEM Benedicte (OSSPOW); BARCIELA VILLAR Ana; AZZABI Omar; BONVIN BONFANTI Anne; BONNY Didier; CORPATAUX Laurence.

Liste 10: UDC

PFEFFER André; CONTI Virna; METTAN Guy.

Liste 11: ENSEMBLE À GAUCHE - LISTE D'UNION POPULAIRE

BURGERMEISTER Jean; BAUD Olivier; VANEK Pierre; BATOU Jean

Par ailleurs, nous constatons avec plaisir que **GHUKASYAN Davit** et **TARVERDYAN Ruzanna**, membres de notre communauté, sont candidats sur la Liste 2 (PLR) et **FUETER OHANESSIAN Valentine**, arménienne par alliance, est candidate sur la Liste 6 (Ensemble à Gauche: SolidaritéS - DAL - Parti du Travail). Nous leur souhaitons bonne chance!

25.02.2023

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽԱՂԱԴՐՈՅՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ ՀԵՐԹԱԿԱՆ ՌԵԿՈՐԴՆ Է ՍԱՀՄԱՆԵԼ

Արմինէ ԱՒԵՏԵԱՆ

Անցած տարի աշնանը հայ հասարակութիւնն ալեկոծուեց այն իրողութիւնից, որ 9 ամիսների կտրուածքով Հայաստանում 4,2 տրլն դրամի կամ 10,5 մլրդ դոլարի խաղադրոյք էր կատարուել: Դա ահռելի մեծ թիւ էր մի երկրի համար, որի տարեկան պետական բիւջէն 2021 թուականին եղել էր դրա շուրջ կէսի չափ:

Կառավարութիւնն արդէն իսկ սկսել էր խաղադրոյքները սահմանափակող որոշ օրէնսդրական մեխանիզմներ մշակել, Ազգային ժողովն ընդունեց գործադիրի այդ առաջարկութիւնները, բայց միեւնոյնն է, մեր խաղադրոյքների թիւն ու գումարը գնալով մեծանում են: Ապացոյցը տարեկան տուեալներն են. «Ալիք Մեդիային» Պետեկամուտների կոմիտէի տրամադրած տուեալների համաձայն՝ 2022 թուականին խաղատներում կատաուել է 52,7 մլրդ դրամի խաղադրոյք, իսկ ինտերնէտ շահումով խաղերում՝ 5 տրիլիոն 774 մլրդ դրամի կամ շուրջ 14,2 մլրդ դոլարի խաղադրոյք: Համեմատելու համար ասենք, որ նոյն տարում Հայաստանի պետական բիւջեի ծախսը սահմանուած էր 2 տրլն 184 մլրդ դրամի չափով, որից 236 մլրդ դրամը պէտք է պարտք վերցնէինք եւ վերցրել ենք: Այսինքն՝ անցած տարի մեր կառավարութեան բոլոր ծախսերը միասին կատարուած խաղադրոյքների կէսն էլ չեն կազմել՝ ընդամէնը դրա 26-27 տոկոսը:

Ընդհանրապէս վերջին տարիներին մեր երկրում խաղադրոյքների չափը բազմապատկուել է: Եթէ 2017 թուականին կատարուել էր ընդամէնը 138,5 մլրդ դրամի, ապա դրա յաջորդ տարում՝ 333,6 մլրդ դրամի խաղադրոյք: Իսկ 2019 թուականին այդ թիւը եռապատկուել է՝ հասնելով 1,1 տրլն դրամի: 2020-ին այն մօտ 2 տրլն, 2021-ին 3,9 տրլն դրամ էր, իսկ անցած տարի՝ աւելի քան 5,7 տրլն դրամ: Այսինքն՝ վերջին վեց տարուայ ընթացքում կամ յեղափոխութիւնից յետոյ կատարուած խաղադրոյքների գումարն աւելացել է 41 անգամ: Աճի այս արագութիւնը պատկերացնելով՝ արդէն վտանգաւոր է կանխատեսել, թե ինչ թիւ կ'ունենանք այս տարի ու յաջորդ տարիներին:

